**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 24 մայիսի 2011 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի ապրիլի 1-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 06.05.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի ապրիլի 1-ին՝ ընտրված համայնքներում արոտավայրերի/անասնապահության համակարգերի արտադրողականությունը եւ կայունությունը բարձրացնելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է, որ Միջազգային զարգացման ընկերակցությունը համաձայնագրում սահմանված կամ դրանում նշված պայման-ներով Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տասը միլիոն երեք հարյուր հազար Փոխառության հատուկ իրավունքի (10.300.000 ՓՀԻ) գումարին համարժեք վարկ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար: Վարկը տրամադրվում է 20 տարի ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ (առանց մայր գումարի մարման): Վարկի մայր գումարի մարումն սկսվում է 2021թ. մայիսի 15-ից եւ ավարտվում 2030թ. նոյեմբերի 15-ին: Վարկի փակման ամսաթիվը 2016 թվականի սեպտեմբերի 30-ն է: Վարկի վճարման արժույթը ԱՄՆ դոլարն է:

3. Ծրագիրը բաղկացած է չորս մասից՝ Մաս Ա. «Համայնքային արոտա-վայրերի/անասնապահության կառավարման համակարգ», Մաս Բ. «Օժանդակող ծառայությունների ամրապնդումը», Մաս Գ. «Մրցակցային դրամաշնորհների ծրագիրը», Մաս Դ. «Ծրագրի կառավարումը եւ մոնիտորինգն ու գնահատումը»:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վարկի չմասհանված հաշվեկշռի դիմաց, կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին Միջազգային զարգացման ընկերակցությանը վճարել պարտավորության վճար՝ տարեկան առավելագույնը կես տոկոս (1 %-ի ½) դրույքաչափով,

- վարկի մասհանված հաշվեկշռի դիմաց՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին Միջազգային զարգացման ընկերակցությանը վճարել սպասարկման տարեկան վճար՝ մեկ տոկոսի երեք քառորդին (1 %-ի ¾) հավասար դրույքաչափով,
- ապահովել, որպեսզի Ծրագիրն իրականացվի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան եւ այլն:

5. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը դրա ստորագրման ամսաթվից հետո հարյուրքսաներորդ օրն է:

6. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի ապրիլի 1-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցակցության ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 մայիսի 2011 թվականի
ՍԴՈ-965